ՈՒԽՏԻ ԵՎ ԳՈՒՌԱՇԻ ԵՐԳԵՐ

ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏԻ ՈՒԽՏԸ

Ղրիմի հայ գաղութը միշտ կապված է եղել մայր հայրենիքի հետ թե առևտրական և թե կուլտուրական կապերով։ Այդ կապերից մեկն է եղել և սուրբ Կարապետի ուխտագնացությունը։

Ամեն տարի ամառվա ընթացքում հայ երիտասարդությունը խոշոր խմբերով, ձիերի վրա նստած, ուխտ է գնացել Մշո Սուրբ Կարապետի վանքը, ճանապարհին այցելել է Հայաստանի տեսարժան վայրերը և անպատճառ իրենց մայրենի Անիի ավերակները։ Այդ սովորությունը Ղրիմի հայերը իրենց հետ բերել էին Նոր Նախիջևան։

Քաղաքի և հինգ գյուղերի ուխտավորները ձմեռվանից սկսում էին պատրաստվել գնալու համար՝ կազմում էին խմբեր, արտասահմանյան անձնագրեր հանում, լավ և դիմացկուն ձիեր էին ձեռք բերում, նրանց պատրաստում երկար ճանապարհի համար։ Գնում էին Թիֆլիսի վրայով։ Կովկասյան և անդրկովկասյան երկաթուղիները կառուցելուց հետո սկսեցին գնալ երկաթուղիով մինչև Թիֆլիս, իսկ այնտեղից ֆուրգոններով և կամ գնում էին Նովորոսիյսկ, նավով հասնում Տրապիզոն, իսկ այնտեղից դարձյալ ֆուրգոններով ճանապարհվում ուխտատեղին։

Սուրբ Կարապետ ուխտ էին գնում միմիայն տղամարդիկ, մուրազ ունեցող երիտասարդները։ Գյուղացիք ամեն տարի սուրբ Կարապետի բաժնին ցորեն էին ցանում. այդ ցորենը ծախում էին և ստացված փողերով գնում ուխտ։

Ուխտը ընդունելի լինելու համար ուխտավորները ծոմ էին պահում, միշտ գնում էին եկեղեցի և աղոթում։

Սևնր մեջ ենք բերում «Խարիր Մելքոնի երգը»։ Այդ Մելքոնը քաղաքացի է, բայց ապրել և դարբնություն է արել Թուիտի գյուղում։ Նա ծանր հիվանդացել է. ուխտ է արել Սուրբ Կարապետին. դրա համար յոթ տարի պաս է պահել։ Իր մեծ եղբոր հրամայողական խորհրդով ճամփա է ընկել ընկերների հետ դեպի Ս. Կարապետ և ճանապարհին մեռել։ Այդ դեպքը մեծ տպավորություն էր թողել ժողովրդի վրա, որի առթիվ հորինված է այս երգը։ Երգի բազմաթիվ վարիանտներից մեջ ենք բերում երկուսը։

1

Օխտը դարի ցավ քաշիլ էր խարիր Մելքոնը,
Օխտը դարի բաս բահիլ էլ խարիր Մելքոնը,
Սուրփ Գարաբեդ ուխտ արիլ էր խարիր Մելքոնը։
Ձիերս հեձանք, ջամփրվեցանք,
Կեղեն չեթ էլլանք։
— Ձիմ լալ աղա, չիմ լալ աղա, ինքդ էշթայիր։
Կնա՛, Մելքոն, կնա՛ Մելքոն, ուխտդ գաղարե,
Գոխն զենգուն, գրուր խամչին, մի՛ մնա հալխեն։
Գոխեցի զենգուս, զրուցի խամչիս, հասանր Նախշվան.
Ջամփվեցանք, ջամփվեցանր խաղ ու խրնդումով,
Ջամփվեցանք մինչև Տամրը խաղ ու խրնդումով։
Տամբեն էլլանք, Քափրայ հասանք, ոտրերս ուռեցան.
Քափրայեն էլլանր սարը մղանք, սիրտս ուռեցավ,
Սարեն էլլանր, Թիֆլիս հասանր, մեղ ոդան չիմացա։
Հայ աղաներ, հայ աղաներ, ջարիս ջար կդիր.
Էրդու դղար խոսր մեղ էղանք, փոշթա պոնեցինր.
Մինչովրի փոշիան էգավ, Մելքոնր լըմնցավ։
Հիսունչորս ստխադաշներս լաց-կոոում էղանք.

Սենք փորեցինք, մենք թաղեցինք մեզ հայ
դերդերով
Հիսունչորս առխաղաշներս չորսդին
փաթթած
Հիսունչորս առխաղաշներս էլլանք-էլլանք
կնացինք։
— Մուրադս դարեր սուրբ Դարարեդին
դուռը դարեցնք,
Բարև դանիր խաչիկ ախպորս և բարայիս,
Բարև դանիր խաչիկ ախպորս և ժամայիս։

2

Օխար դարի ցավ բաշիլ էր խարիբ Սելբոնը,
Օխար դարի բաս բահիլ է։ խարիբ Մելբոնը,
Օխար դարի աղոթք դաներ, ֆում ղըբահեր
խարիբ Մելբոնը,
Սուրփ Գարարեդ ուխտ արիլ էր խարիբ
Մելբոնը։
Ձիերս հեծանք, կեղեն չեթ էլլանք,
Ուխտավոր դդաքս թուփ էղանք։
— Ձիմ լալ աղա, չիմ լալ աղա, ինքդ
էշթայիր
— Կնա՛ Մելբոն, կնա՛ Մելբոն, ուխտեդ մի՛
մնալ,
Կնա՛ Մելբոն, կնա՛ Մելբոն, տուն ան
ջանփորդն իս.
— Ձիմ լալ աղա, չիմ լալ աղա, ջամփան
գըմնամ.
— Գնա Մելբոն, ուխտդ դադարե, դուն ան
ջամփորդն իս,
Գոխն դենպուն, դրուր խամչին, ջամփեդ մի
մնալ։
— Գոխնցի ղենդուս, գրուցի խամչիս, հասա
Նախշվան.
— Ձիմ լալ աղա, չիմ լալ աղա, ինքդ
էշթայիր։
— Կնա Մելբոն, կնա Մելբոն, հալխեն մի՛
մնալ,
Համփուրվեցանք, փաթթվեցանք, ձիերս
հեծանք.
Համփուրվեցանք, ջամփվեցանք մինչև
Տամբը։
Տամբեն էլլանք, Կավկաղ մդանք,
սիրդս տողաց.
Կավկաղեն էլլանք, սարը մդանք, մեղ պան
չիմացանք։
Էրդու դդա մեղ խոսք էղան փոշթա պռնելու.

Մինչև փոշթան էգավ, հասավ, Մելբոնը
լըմնցավ։
Հեմ փորեցինք, հեմ թաղեցինք մեզ հադ
դերդերով.
Հեմ փորեցինք, հեմ թաղեցինք թուրքին
չոլին մեջը։
Հիսունչորս ուխտավորով լաց-կոռում
էղանք։
Բուլան ձին էգեռով հեգներս դարինք,
Սուրբ Դարարեդին տուռը դարեցինք.
Ժամին մեջը խունդով-մոմով հոքուն արինք.
Ալայս մեդդեղ նորեն լաց-կոռում էռանք։
Պարև դարեք Անդրնաս աղայիս, ընդերներ,
Պարև արեք Մարիաս յանդայիս, ընդերներ,
Պարև դարեք նացա դղոցը, ընդերներ,
Նաբա թող լան ուխտս դադարողը,
ընդերներ։

Այս երդը իր տխուր մեղեդիով մինչև օրս էլ երդվում է թե դյուղերում և թե քաղաքում։

3

Սուրփ Գարարեդի ցորենը մաղած,
Ամբարին աչքը իլինք լըցած,
Ռոռու ձին առանը գաբած,
Խը՛ռ-խը՛ռ գանեն հազիր գաւնած,
Նալերեն թեք գնած, բահ՛ած,
Էղեռ թախըմ հազիր սարքած,
Հերդենները գողեն դախած,
Ձենգուները օսկի ճըրած,
Լուդեն, դիզդին, չուլբուր ֆըսած
Սև խաթոանով աղեդ ներկած.
Դղաս գանանչ դարան հաքած,
Արձըթե կողին մեջքը գարած,
Մոշթի կդաղը կլուխը տըրած,
Թուրը-սուրը քովեն դախած,
Ուխտ բիդ էշթա սուրփ Գարարեդ,
Աստված անրադաս նարա հետ։

Մերները, տղամարդ թե կին, ուխտ էին գնում Սրուսաղեմ, նրանց վերադառնում էին հաճիներ դարձած, նրանց վրա նայում էին որպես սրբապաշտ, աստվածավախ և եկեղեցուն նվիրված մարդկանց։

Սուրբ Կարապետ ուխտ գնացող տղամարդկանց վրա այլ էր ժողովրդի հայացքը։ Նրանք ոչ հաճիներ էին և ոչ էլ իրենց հոգու փրկության մասին մտահոգվածներ։ Սուրբ Կարապետ գնացողները հայրենասերի համբավ ունեին, թեպետ գոյություն չուներ սուրբ

1 Այս երգի նոտագրված օրինակը տե՛ս Մ. Լյուլեճյանի ժողովածուն։

Կարապետ գնացողների առանձին կազմակերպություն, բայց նրանք ամենքը կապված էին իրար հետ հայրենասիրական կապով։

Մ. Նալբանդյանի թաղման հանդեսին սուրբ Կարապետ գնացող ուխտավորները մասնակցել են որպես մի առանձին կազմակերպություն։

Սուրբ Կարապետի ուխտագնացությունը սերտ կապված էր Անիի ուխտագնացության հետ. ուխտավորները երկու տեղն էլ այցելում էին, բայց գոյություն ուներ և առանձին Անիի ուխտագնացություն։ Այդ մասին ևս եղել են երգեր, որոնցից մեզ հասել է միմիայն հետևյալը.

Ուխտավոր եմ դեպ Անի,
Ջամփուն գեսը քունս դանի.
Ջարթիմ, էլլիմ դեղես չըստ,
Բախտ չունիմ նը՝ մնամ փըստ։

Նախիջևանցիք համարում էին իրենց անեցիների ժառանգները, Անին նրանց համար եղել է մի խնկելի սրբություն։

ՏԵՂԱԿԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Ուխտագնացությունը շատ ընդունված էր Նախիջևանցիների մեջ։ Նրանց պատմության Ղրիմի շրջանում ևս ուխտագնացությունը եղել է շատ զարգացած։ Ունենալով Ղրիմում հարյուրավոր եկեղեցիներ, ունեցել են բազմաթիվ ուխտատեղիներ։ Ամենամեծ ուխտաեղիները եղել են Հին Ղրիմի Սուրբ Խաչ վանքը և Քեֆեի Սուրբ Գեորգ եկեղեցին, խրտոելեզի ժամը։

Հին Ղրիմի Ս. Խաչ վանքը շինված է 1330—1338 թվականին. նա հայոց վանքերի մեջ ամենահոյակապն է եղել, նա ունի մեծ պատմական անցյալ. եկեղեցու շենքը այժմ էլ կանգուն է. այդ եկեղեցուց առաջ էլ վանքի անտառում եղել է եկեղեցի, որի ավերակները այսօր էլ կան։ Այդ վանքը բոլոր ղրիմցի հայերի համար եղել է մեծ ուխտատեղի. նա ունեցել է ուխտավորներ ընդունելու խոշոր հարմարություններ՝ օթևաններ, օդաներ և այլն։ Ուխտավորները շարաթներով ապրել են վանքի օդաներում։

Երկրորդ հռչակավոր ուխտատեղին եղել է Քեֆեի Սուրբ Գեորգ եկեղեցին, որի ուխտը տոնվել է հունական Սուրբ Գեորգի տոնի օրը, ապրիլի 23-ին (հ. տ.) և կոչվել է խրտոելեզ։ Այդ ուխտը տոնվել է երեք օր և մեծ տոնավաճառով։ Խրտոելեզի ուխտի տոնավաճառին մասնակցել են հույներ և թաթարներ։ Ուխտավորները միշտ բերել են մատաղի դառներ. հորթեր և մինչև իսկ եզներ։

Սուրբ Գեորգի եկեղեցին շատ հին է. երբ է հիմնված. անհայտ է։ Թեոդոսիայի թանգարանում գտնվում է մի տապանաքար 1027 թվականի արձանագրությամբ։ Պատմական նշանակություն ունեցող այդ քարը 1811 թվականին Ս. Գեորգի եկեղեցուց հանել և տարել են թանգարան, որտեղ մինչև օրս էլ պահվում է։

Գաղթելով Նոր Նախիջևան, ղրիմցիք հիմնել են և Սուրբ Խաչ վանք և Սուրբ Գեորգ եկեղեցին։ Այդ երկուսն էլ դարձել են ուխտատեղիներ։

Նոր Նախիջևանի Սուրբ Խաչ վանքը շինված է Ղրիմում թողած Սուրբ Խաչ վանքի փոխարեն։ Շատ հայտնի դարձավ նրա «Վաշդևորի» (վարդավառ) ուխտը։ Ամբողջ Նախիջևանը այդ օրերին տեղափոխվում էր Սուրբ Խաչի պարտեզը. քաղաքացիք գնում էին ամբողջ ընտանիքներով. հետները տանում սեղաններ. աթոռներ. ինքնաեռներ. ուտելիքներ. վրաններ խփելով. ապրում էին այնտեղ երեք օր։ Այդ օրերին վանքի եկեղեցին անդադար կատարում էր եկեղեցական արարողություններ. քաղաքի բոլոր քահանաները, տիրացուները. երգեցիկ խումբը գնում էին Ս. Խաչ ծառայում։ «Վաշդևորի» (վարդավառի) ուխտագնացությունը հարս ընտրելու տեղ էր։ Երիտասարդները լավ հագնված խումբ-խումբ մանում էին գալիս պարտեզում։ Աղջիկները նույնպես դրսևորում էին, իրենց ցույց տալիս «կտրիճներին»։ Հարյուրավոր վրաններում կատարվում էին բազմաթիվ նշանդրեքներ։ Քաղաքի բոլոր երաժիշտները և նվագախմբերը այդ օրերը անց էին կացնում Սուրբ Խաչի պարտեզում։ «Ռոտոնտի» վրա նվագում էր նվագախումբը. բուֆետը բազմաթիվ սեղաններով սպասարկում էր քեֆ անողներին։ Երգ ու պար էր ամեն անկյունում։

Վարդավառի ուխտագնացության օրը վանքի առատ ու համեղ ջրով աղբյուրի մոտ խաղում էին «Վաշդևորդ», այսինքն՝ սառը ջրով իրար թրջում էին և մեծ ճվճվոցով ու աղմուկով զվարճանում։

Վարդավառի տոնը նկարագրել են Ռափայել Պատկանյանը[2], Հարություն Խատամյանը[3] իրենց գեղարվեստական երկերում և Յուրի Վեսելովսկին իր ընդարձակ հոդվածով «Русские ведомости» օրաթերթում։

Վարդավառի կիրակի օրը, պատարագից և մատաղ ուտելուց հետո տեղի էր ունենում «դուռաշ» (ըմբշամարտ), որին մասնակցում էին բաղարի և գյուղի կտրիճները։

Այլ պատկեր էր խրդոնելեզի օրը։ Ս. Գևորգ եկեղեցին դանվում էր քաղաքից դուրս, դաշտի մեջ, երկու քաղաքների (Նախիջևանի և Ռոստովի) արանքում։ Եկեղեցին ուներ շատ մեծ բակ, որը հավասար էր մի բանի հեկտարի։ Տոնից մի քանի օր առաջ բակի մի կողմում շարվում էին չորս-հինգ կարուսելներ, նրանց կողքին կրկես, նրա կողքին լարախաղացներ և այլն։ Բակի մյուս կողմում շարվում էին արևելյան անուշեղենների վաճառող հալվաճիները, մրգեղեն, լիմոնադ և այլ շրեր ծախողները։ Առանձին կարգով շարվում էին երեխաների համար խաղալիքներ, զանազան ծախողները, հարմոն նվագողները և այլն։

Քաղաքի և գյուղերի հայությունը սիրում էր խրտոնելեզի տոնը։ Գյուղացիք դալիս էին լայն ձիերը լծած։ Երիտասարդ կանայք և աղջիկները դալիս էին ոտաբոբիկ, դալիս էին ուխտի նախօրյակին, երբ օրհնում էին մատաղայու անասուններին, մասնակցում նախատոնակին և միմիայն հետևյալ օրը ժամերգությունից վերջը հաղնվում և մասնակցում տոնահանդեսին։

Այդ ուխտին մասնակցում էր Ռոստովի ամբողջ հասարակությունը. Մարիուպոլ քաղաքից և նրա բազմաթիվ գյուղերից դալիս էին հայերի հետ Ղրիմից դաղթած հույների ժառանգները. այդ սովորությունը մնացել էր Ղրիմից։ Այստեղ ևս ժամերգությունից հետո տեղի էր ունենում «դուռաշ» (ըմբշամարտ)։

Վարդավառի և խրդոնելեզի տոների առթիվ եղել են շատ երգեր, որոնք դժբախտաբար մոռացված են։ Մենք մեջ ենք բերում մեզ հասած մի քանի բեկորները։

---

2 Ռ. Պատկանյան, երրորդ հատոր, Նոր Նախիջևան, 1904, էջ 190—207։

3 Հ. Խատամյան, Նոր Նախիջևանի պատկերներ, Նոր Նախիջևան, 1915։

ԴՅՈՒՂԱՑԻ ՏՂԱՆԵՐԸ ԵՐԳՈՒՄ ԵՆ՝

1

Հայդցեք, դղաք, թոփ լանք,
Խրդոնելեզ ուխտ էշթանք.
Հոն սիրուն հայ ախչիգներ
Մեզի գըսպասին անհամբեր։
Օսկի ֆեսերը կլոխները,
Խուլանով կոդին մեջքերը,
Ֆիդանի բես սոսուն բոյով,
Գդրիջ դուդին բոյով-բուսով։

Այս երգի շարունակությունը մեզ չհաջողվեց դտնել։

2

Ասոր ուխտ է, խրդոնելեզ.
Մամա, ձգև մեզ դրաբեզ։
Հազիր էդիր, մեմը ել մեյղան,
Կեղացի սոյերս բիդի կան,
Ախչիգները պորիդ ոտքով,
Գրդրիջները էդեռը ծիով։
Վարը փոս մեզ քիլիմ,
Հացը մանդռև դիլիմ-պիլիմ,
Էրիկ բոյդեդ ծուկի բալման,
Թռ ուդին ու քրշտանան։
Մենք ալ դեշթանք նացա դունը,
Գուդինք նացա անբակ մաձունը,
Համով էփած խուզիի մաղաղը,
Սերը, դարաբը, անուշ խայմախը։

3

Զաղդի դանանչ դիրաղին
Մեղդեղ դեշթանք խրդոնելեզ,
Քուռուշը քուռ,
Կդաղը ձուռ,
Անունը Զաղուր։

ՎԱՇԴԵՎՈՐԻ ԵՐԳ[4]

Սամսա—խաթլամա, խաուրմա,
Պոլտինիգ արբա-քիրա,
Սամավարը սիրդիս գոխաձ,
Վաշդևոր ուխտ կնացինք։
Ջեմը անբախտութին բաղահեցավ,
Սավեթին բաշմաբիին թեքը
Ոտն ջամփտյին փոսը ինկավ։
Սավեթը շաշիմիշ չարավ,
Մեղալ բաշմաբին ալ առավ,

---

4 Այս երգը տվել է մեզ Զ. Զարիֆյանը, որը լսել է իր 94 տարեկան հորաքույր Տ. Զախմախյանից։

Հանից էդգսում ռտքեն, բահից,
— Պորիգ ուխտ էկիլ իմ,—գանչից։

ԳԱՐՋՈՒԳ ՄԱՌԹԻՆ[5]

1

Հեյ, մեկդի գացեք մեյդան.
Ի՞նչ ադբես առչև կուկան,
Զարդ խամչին. տուն մի նայիլ,
Հոնէն ալ դրլա սեիր,
Թո՛ էլլին գրգրիչները։
Ո՞ւր է կոմեշին կլոխը
Թո մեյ-ան կա ուզեցողը,
Դե, հածե, դևե խալդրան[6],
Աթխուլախ, այու երեսան[7],
Հաբա տուն, գարչուգ Մառթին,
Ինչի՞ գընայիս հալխին։
Իշթե գարչուգ Մառթինը։
Գայնեց Ագոփին առչևը,
Էդան կոդի-կոդիի,
Առնվեցան ձեոք-ձեոքի,
Թընդաց դագը կեդինը,
Հավա էլլան թոզերը։
Դաքցան, ասլան զրդռեցան,
Զորս բովը բրդրդվեցան,
Ագոփը փաթթվեցավ
Ու մեբրևն խաթմիշ արավ.
Մառթինը մեգեն սլոնից,
Ճդից, վերուց, թաբլից։
Էլլան դահա գրդրիչներ,
Ան Մառթինին հեչ պան չէր,
Նարա կալ էր բադոաձը,
Կիդե ալայ աշխարքը,
Նա օմուզին վբայնն
Օրա թաբլած գրգրիչ է։
Գարչուգ Մառթինին ուժին
Ուժ չի հասնի հէչ մեդին.
Աֆֆե՞րիմ, դարչուգ Մառթին,
Նամ իս դուն կեղացիին.
Տուն առիր ան կլոխը
Քրդինրիդ հելալ հախը։
Ծո, Մառթին, մեյնագ չուդիս,
Մէր փայոն ալ բիչ մը բահիս
Դլխուն համը մենր ալ դեսնունը,
Քու ուժդ մենր ալ առնունը։
Ինչի բես ասլան զդոինք
Կալ բաղոինք, օբա զրբչինք։

2

Սուփ Գեորգին բաց ազբարը.
Գուռաչ բացից լուսարարը.
Բատանը փչից իրեն զուռնան
Հեգն ալ դաուլը ու բոռոզան։
Գդրիչները թոփ էղան,
Գուռաչչիները մեյդան էլլան.
Կեղ ու քաղաք դիմաց-դիմաց
Հազիր գըլան գամաց-գամաց։
Մեյդան էլլավ Տելի Խազարը.
Տիմացը էլլավ Թոփցի Նազարը.
Էրգուսն ալ նամ դված գդրիչներ.
Ուժով ու քաչ գուռաչչիներ։

Փաթթվեցան յամբաչ-յամբաչի.
Բռնվեցան մեծ զոռ գուռաչի,
Ոտքերուն դագը ֆողը գըգռդա.
Նայողներուն վրան ահ-դող կուկա։

3

Գուռաշ կուկան գդրիչները,
Սեիր գանին ախչիդները.
Մամաները սոլովեն
Դեյմիշ գանին հեռուեն։
Մեմալ նայիս, շամաթա էլլավ,
Խազարին զոնագը կեգինին դրավ.
Բագանը չալից գոչ հավա,
Հալխը գանչից էվալլա։
Օղին լացից. Լուսիդը խնդաց,
Կեղացիք առին կլոխը իրանց։
Դաուլ-զուռնայով բեֆ արին,
Դանդրլ-դանդրլ խաղացին։
(Դաուլ-զուռնան չալեցին,
Դրոլ-դրոլ խաղացին)[8]։

«Կուռաշները» տեղի էին ունենում միմիայն ուխտի օրերը և միմիայն մատաղի գլխի վրա։ Գլուխը պետք է լիներ անպատճառ եղի, արջառի կամ գոմեշի։

Քաղաքում «կուռաշներ» կազմակերպում էին միմիայն Սուրբ Գեորգ եկեղեցու բակում խրասելեղի օրը և Սուրբ Խաչ վանքի բակում «վարդեորիս» օրը։ Քաղաքը ինքը յուր հասարակական միջոցներով մատաղ չէր անում. այդ եկեղեցիների մատաղը բերում էին մասնավոր անհատներ, գլխավորապես գյուղացիք։ Բերում էին առավելապես ոչխարներ և արջառներ, շատ սակավ եղ կամ գոմեշ։

---

5 1903 թվականին հրատարակված եր. Շահազիզի հիշված աշխատության մեջ և աշակերտական «Լուսաբեր» ամսագրում։

6 Դեև խալդրան—ուղտ բարձրացնող։

7 Այու երեսան—արջ զլորող։

8 Այս երգի խոսքերը տվել է մեզ Լուսեղեն Խաղիզյանը։

Այլ էր պատկերը գյուղերում։ Մատաղին մասնակցում էր ամբողջ հասարակությունը։ Ամեն մի գյուղ ուներ խոշոր, շատ խոշոր մատաղի «խալկիններ» (պղնձե կաթսաներ), որոնցից ամեն մեկի մեջ կարելի էր եփել մի կամ երկու եղ։ Այդ խոշոր կաթսաները գյուղացիք բերել էին իրենց հետ Ղրիմից։ Ուխտի համար ամեն մի հասարակություն գնում էր իր միջոցներով մի կամ երկու եղ, մի քանի հատ ոչխար։ Այդ անասուններին ուխտի նախօրյակի երեկոյան տանում էին եկեղեցու դուռը, որտեղ քահանաները առանձին արարողությամբ օրհնում էին մատաղացուն։

Մատաղացուները տանում էին գյուղական կառավարության բակը և մորթում։ Ամբողջ դիշերը լիազորված անձինք եփում էին մատաղի միսը։ Մատաղի համար նախօրոք բոլոր գյուղացիներից հավաքում էին մի-մի հաց, բուլղուր, աղ և թեղաք (աթար)։ Ամեն եկեղեցի ուներ մատաղ ուտելու համար առանձին շենք. հաճախ մատաղ ուտում էին ուսումնարաններում։ Մատաղապուրը պատրաստում էին բուլղուրով։ Ամեն մի գյուղ ուներ հարյուրավոր փայտյա ափսեաձև պընակներ, որոնցով տալիս էին մատաղապուրը։ Միս և մատաղապուր տալիս էին միմիայն ծերերին, իսկ մնացյալների համար խոշոր կաթսաներով բերում էին եփած միսը, մանրած հացը, դնում եկեղեցու բակի դարպասի մոտ և բաժանում եկեղեցուց դուրս եկողներին, ամեն մեկին տալիս էին մի-մի կտոր միս և հաց, վրան էլ ցանում էին աղ։

Ամենից ավելի ընդունված էր Սուրբ Կարապետի ուխտը Նիսվիթա գյուղում։ Գյուղացիք և քաղաքացիք ուխտ էին գալիս և մատաղ բերում ոչխարներ և արջառներ։

Հեթանոս ժամանակվանից մնացած այս սովորությունը վերջացավ միմիայն սովետական կարգեր հաստատվելուց հետո։ Խրտոնելեղի և վարդևորի ժամանակ մրցում էին կուռաշի մեջ մի կողմից քաղաքացիք, իսկ մյուս կողմից գյուղացիք։ Գյուղում կուռաշը տեղի էր ունենում ուրիշ կերպ։ Կուռաշը կազմակերպում էին ուխտատեղի գյուղացիք. կուռաշ էին գալիս մի կողմից ուխտատեղի կտրիճները, իսկ մյուս կողմից մյուս գյուղերի կտրիճները։ Կուռաշի ժամանակ «տաուլ-զուռնան» անգադար նվագում էր։ Գլուխ ստանալու համար հարկավոր էր հաղթել երեք կտրիճի, բայց եթե «կուռաշի» դուրս գալու ցանկացողներ չլինեին, տալիս էին մեկին կամ երկուսին հաղթելուց հետո։ Մատաղի գլուխը հաղթողը ուտում էր իր ընկերների հետ։